ԱԳՐՈ Լրատու

ԴԵԿՏԵՄԲԵՐ 15- 26 2015 Թ. ԹԻՎ 33 (2088)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի ուղերձը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ

Ջերմորեն շնորհավորում եմ ագրարային ոլորտի ներկայացուցիչներին՝ հողագործներին, գիտնականներին, գործարարներին, ֆերմերներին գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Տարեմուտի նախաշեմին ավանդաբար ամփոփելով կատարված աշխատանքը՝ կարող ենք գոհունակությամբ արձանագրել, որ գյուղատնտեսության համար 2015 թվականը հաջողված էր: Տարվա ընթացքում գրանցված ցուցանիշներն ու աճի դինամիկան ամրապնդեցին այն լավատեսությունը, որ իրապես կայուն նախադրյալներ են ստեղծվել ոլորտի հեռանկարային զարգացման համար, և գյուղատնտեսությունն ունի հզոր ներուժ՝ տնտեսական դժվարին պայմաններում երկրի համար ամուր հենասյուն դառնալու:

Եվ այս ամենն առաջին հերթին շնորհիվ հայ շինականի, ով ամուր կառչած է հայրենի հողին և արդար աշխատանքով շարունակում է շենացնել իր տունն ու հայրենիքը:

Անշուշտ, եղան նաև դժվարություններ, մասնավորապես՝ խաղողի մթերումների հարցում. լարվածությունից հնարավոր չեղավ խուսափել, որը սակայն, պետական ու մասնավոր հատվածի համատեղ գործուն ջանքերով, արագ հաղթահարվեց, և գործընթացը բարեհաջող կերպով հասցվեց ավարտին:

Պետությունը շարունակելու է տարբեր օժանդակության ծրագրերով և բոլոր հնարավոր միջոցներով աջակցել գյուղացուն՝ շտկելու իր մեջքը և ավելի վստահ նայելու վաղվա օրվան: Դժվարությունները շատ են, սակայն դրանք հաղթահարելի են, երբ միավորվում են ջանքերը: Գալիք տարիներին մենք պետք է շարունակենք ավելի մեծ ուշադրություն դարձնել կոոպերատիվների ստեղծման, արտադրության ինտենսիվացման, գյուղատնտեսությունում նոր տեխնոլոգիաների ներդրման հարցերին:

Լիահույս եմ, որ 2016 թվականը թե գյուղատնտեսության, և թե ընդհանուր առմամբ, մեր երկրի տարբեր ոլորտներում արգասաբեր ու բեղուն կլինի:

Թող Նոր տարին հայ ժողովրդի համար խաղաղության, կայունության ու հզորացման տարի լինի և դրական փոփոխությունների, հաջողված ձեռնարկումների, աննահանջ առաջընթացի և բարեկեցության տարի լինի հատկապես հայ գյուղացու համար:

Ապրիլած մեր պահապան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Գործադիրը փոփոխություն է կատարել նախկին ընդունած որոշումներից մեկում՝ ներդրումային ծրագրի շրջանակում «Ինտերալկո» ՍՊԸ-ի կողմից 200 միլիոն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում, մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ գումարների վճարման ժամկետը ևս մեկ տարով՝ մինչև 2016 թ. դեկտեմբերի 31-ը, երկարացնելու նպատակով: Ներդրումային ծրագրի շրջանակում «Ինտերալկո» ՍՊԸ-ն նախատեսում է Արմավիրի մարզում «Արմեն-ալկո» ՍՊԸ-ին պատկանող գործարանում իրականացնել խաղողի թորվածքի, բրենդիի, մրգային սպիրտների և գինու արտադրություն: Ընկերությունը նախատեսում է տեղական ֆերմերային տնտեսություններից գնած հումքից արտադրել խաղողի/գինու, մրգերի թորվածքներ, որին ավելացնելով Եվրոպայից ներկրված հումք՝ մեծածախ քանակով արտահանել ԱՊՀ և այլ երկրներ: Ընկերությունը կներդնի հոլանդական և ֆրանսիական արտադրությամբ ժամանակակից սարքավորումներ: Ներդրումային ծրագրի իրագործման արդյունքում կստեղծվի մոտ 30 աշխատատեղ:

* * *

Գործադիրի մեկ այլ որոշմամբ՝ «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակում, կօգտվի ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից: Արտոնության առկայությունը լուրջ խթան կհանդիսանա նոր ներդրումային ծրագրերի իրականացման և նոր աշխատատեղերի ստեղծման, ներդրումների ներգրավման, տեղական արտադրության և արտահանման խթանման համար:

* * *

Կառավարության նիստում հավանության են արժանացել Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի (ՕԿԱԿ) առաջարկները, որոնք վերաբերել են գյուղատնտեսության, անշարժ գույքի և ֆինանսների ոլորտները կարգավորող օրենսդրությանը: ՕԿԱԿ-ը հանդես է եկել «Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի փոփոխության նախաձեռնությամբ, մասնավորապես՝ առաջարկելով լիազորել ՀՀ կառավարությանը սահմանել ճանաչված միջազգային կազմակերպությունների ցանկ, որոնք կարող են հավատարմագրել սերտիֆիկացման մարմիններին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոլորտում գործող կազմակերպությունները ներկայումս չեն կարող հավատարմագրվել Հավատարմագրման ազգային մարմնի կողմից, քանի որ այն չունի օրգանական գյուղատնտեսության ոլորտում համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող ֆիզիկական ու իրավաբանական անձանց հավատարմագրելու փորձագիտական (տեխնիկական, մասնագիտական) հնարավորություններ:

* * *

Գյուղատնտեսության ոլորտում գործող օրենսդրության մեկ այլ փոփոխությամբ առաջարկվել է թափոնների անձնագրերի համաձայնեցման գործընթացներն իրականացնել 15 աշխատանքային օրվա ընթացքում, ներկայումս գործող 30-օրյա ժամկետի փոխարեն և սահմանել, որ լիազոր մարմինը համաձայնեցման ներկայացված անձնագրի թերի լինելու կամ անճշտությունների առկայության դեպքում, անձնագիրը լիազոր մարմին մուտք լինելուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում հետ է վերադարձնում լրամշակման:

ԾՐԱԳԻՐ

Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն

Հայաստանում մեկնարկել է «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից Ավստրիայի զարգացման գործակալության համաֆինանսավորմամբ: Եռամյա ծրագրի հիմնական նպատակն է ֆինանսական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել Հայաստանում օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերներին, ագրոբիզնեսին և կոոպերատիվներին, ինչպես նաև օժանդակել օրգանական ասրտադրողների և վերամշակողների համար միջազգային ստանդարտներին համապատասխան հստակ և կայուն օրենսդրական դաշտի ստեղծմանը:

«Օրգանական գյուղատնտեսությունը մեր երկրի հեռանկարային ուղղություններից մեկն է, և այսօր մեկնարկող ծրագիրը միտված է նպաստել մեր երկրում այս ոլորտի զարգացմանը: Այն նպատակ ունի աջակցել ֆերմերներին, որպեսզի վերջիններս ներդրումներ կատարեն օրգանական գյուղատնտեսության ոլորտում, մեծացնեն արտադրության ծավալները, բացահայտեն նոր միջազգային շուկաներ, ինչպես նաև ապահովեն բիո արտադրանքի առկայությունը տեղական շուկայում», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Արմեն Հարությունյանը:

Փոխնախարարը նաև հավելել է, որ ծրագիրը կազմված է լինելու չորս հիմնական բաղադրիչներից՝ օրգանական գյուղատնտեսությանը վերաբերող օրենսդրական դաշտի բարեփոխում, դրամաշնորհների միջոցով ոլորտի զարգացում, հասարակության լայն շրջաններում այս խնդրի շուրջ իրազեկման մակարդակի բարձրացում, ինչպես նաև օրգանական գյուղարտադրանքի համար արտահանման նոր շուկաների բացահայտում:

Արմեն Հարությունյանը նաև նշել է, որ ծրագրի իրականացման ընթացքում, որպես ընդօրինակման մոդել ընդունվելու է եվրոպական երկրների փորձը, որոնք առավել առաջադեմ են համարվում օրգանական գյուղմթերքի արտադրության հարցում:

«Մենք ուրախ ենք աջակցել «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն» ծրագրին: Այն հաստատում է մեր նվիրվածությունը Հայաստանի գյուղական ոլորտին, ինչպես նաև ամբողջական է դարձնում արդեն իսկ առկա աջակցությունը, որը տրամադրվում է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ENPARD ծրագրի շրջանակներում, որտեղ ևս մենք արդյունավետ համագործակցում ենք Ավստրիական զարգացման գործակալության հետ», -նշել է Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Անտոնի Սվիտալսկին:

Ծրագրի խոշոր բաղկացուցիչ մասերից է անմիջապես արտադրողներին և վերամշակողներին դրամաշնորհների տեսքով ֆինանսական աջակցության տրամադրումը: Փոքրածավալ դրամաշնորհներ կտրամադրվեն, մասնավորապես՝ սկսնակ ֆերմերներին, ովքեր սերտիֆիկացման համար աջակցության կարիք կունենան:

Խոշոր դրամաշնորհներ կտրամադրվեն օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերներին, կոոպերատիվներին և վերամշակողներին՝ արտադրողականության բարձրացման և շուկա մուտք գործելու հնարավորության ընդլայնման համար:

Սպառողներին և ֆերմերներին օրգանական գյուղատնտեսության առավելությունները և հավելյալ արժեքի հնարավորությունները ներկայացնելու նպատակով, նախատեսվում է իրականացնել իրազեկման քարոզարշավ:

«Ավստրիան ունի օրգանական գյուղատնտեսության բազմամյա փորձ և այսօր գյուղատնտեսական մշակաբույսերի համար օգտագործվող հողերի գրեթե 20 %-ը օրգանական են: Մենք ձգտում ենք մեր այդ փորձը փոխանցել մեր նախագծերին, որոնք աջակցում են սկսնակ ֆերմերներին՝ բարելավել գյուղատնտեսական արտադրությունն ու մարքեթինգը: Օրգանական գյուղատնտեսությունը հնարավորություն է տալիս լավագույնս օգտագործել բնական ռեսուրսները՝ միևնույն ժամանակ պահպանելով շրջակա միջավայրը և կենսաբազմազանությունը», - նշել է Ավստրիայի զարգացման գործակալության միջազգային ծրագրերի տնօրեն Ռոբերտ Զեյները:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քննարկել և հնարավորության սահմաններում աջակցություն ցուցաբերել

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանի հետ համատեղ, խորհրդակցություն է անցկացրել շուրջ 50 ագրովերամշակող ընկերությունների և ջերմոցային տնտեսությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպմանը մասնակցում էին նաև Ռուսաստանում ՀՀ առևտրական ներկայացուցիչ Կարեն Ասոյանը, «Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միության» նախագահ Երվանդ Թարվերդյանը, «Կաթնամթերք արտադրողների միության» նախագահ Խաչատուր Պողոսյանը, «Հայաստանի մսամթերք արտադրողների միության» նախագահ Արամայիս Բիլյանը, «Հայ գինեգործների միության» նախագահ Ավագ Հարությունյանը, «Չորացրած մթերք արտադրողների ասոցիացիայի» նախագահ Սանդրո Աբովյանը, «Հայ ձկնաբույծների միավորման» նախագահ Արմեն Բունիաթյանը:

Խորհրդակցության նպատակն էր՝ քննարկել դեպի ռուսական շուկա հայկական գյուղմթերքի արտահանումների ավելացման հարցը՝ կապված թուրքական ապրանքների ներմուծման արգելանքի հետ, արտահանումների գործընթացում ընկերությունների հիմնական խնդիրները և համատեղ ուժերով կազմել արտահանումների խթանման միջոցառումների իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր: «Սա մեծ հնարավորություն է, որը մեր երկրի տնտեսության համար նպաստավոր պայմաններ է ստեղծել, և այն պետք է առավելագույնս արդյունավետ օգտագործել արտահանումների ծավալները հնարավորինս ավելացնելու համար. բավականին մեծ ռեզերվներ ունենք գյուղատնտեսության ոլորտում և վստահ եմ, որ հետևողական և նպատակային քայլերի շնորհիվ, կարող ենք ոլորտում առավել տպավորիչ արդյունքներ գրանցել: Կառավարությունը մեծապես կարևորում է վերամշակող ճյուղի դերը գյուղատնտեսության զարգացման գործում և միշտ պատրաստակամ է քննարկել և հնարավորության սահմաններում, աջակցություն ցուցաբերել», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարար Կարապետյանի խոսքով՝ արդեն իսկ հայտնի է այն գյուղմթերքների ցանկը, որը կարող է պահանջարկ ունենալ ռուսական շուկայում: Դրանք են՝ թարմ և վերամշակված պտուղ-բանջարեղենը, ձկնեղենը, չրերը, վերամշակված մսամթերքը և կաթնամթերքը:

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանը հավելել է, որ սա մեկ տարվա մեջ հայկական արտադրողների համար երկրորդ հնարավորությունն է դեպի ՌԴ ավելացնելու արտահանման ծավալները: Նրա խոսքով՝ առաջին հնարավորությունը ստեղծվեց, երբ Ռուսաստանը եվրոպական երկրների նկատմամբ պատժամիջոցներ կիրառեց, սակայն այժմ միջավայրն ավելի բարենպաստ է մեզ համար, քանի որ Թուրքիան մեր հիմնական մրցակից երկիրն էր ՌԴ շուկայում:

Խորհրդակցության ժամանակ ՌԴ-ում ՀՀ առևտրական ներկայացուցիչ Կարեն Ասոյանն իր հերթին պատրաստակամություն է հայտնել աջակցել հայ արտահանողներին՝ ռուսական շուկայում գործընկերային կապեր հաստատելու հարցում: Հանդիպման ընթացքում նախարար Ս.Կարապետյանը լսել է մասնակիցների կողմից տարբեր ոլորտներում բարձրացված հարցերը և նշել, որ դրանք կամփոփվեն և կներկայացվեն կառավարություն՝ հնարավորության սահմաններում լուծում ներ տալու նպատակով:

ԿՐԹԱԿԱՆ

ICARE հիմնադրամը տոնում է մի քանի հոբելյաններ

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը (ICARE) վերջերս տոնում էր մի շարք հոբելյաններ՝ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի (ATC) 15, Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի (ICARE) 10, Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրի (MAB) 5 և Ի-Վի-Էն գինու ակադեմիայի (EVN) 1-ամյակը: Ողջույնի խոսքով հանդես եկան ICARE հիմնադրամի տնօրեն Վարդան Ուռուտյանն ու Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր Արշալույս Թարվերդյանը:

Դեռևս 15 տարի առաջ հիմք դրված այս երկու կառույցների համագործակցության ձեռքբերումների և նվաճումների մասին բարձրաձայնում են կազմակերպության ղեկավարները՝ հիմնվելով թվերի և փաստերի վրա: «Տասնհինգամյա Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի թվով մոտ 450 շրջանավարտների աշխատանքի տեղավորման ներկայիս վիճակագրությունը ցույց է տալիս, որ նրանք ավարտելուց հետո գործնականում մասնագիտական աշխատանք գտնելու խնդիր չեն ունենում, ընդ որում՝ վարձատրվելով շուկայում միջին աշխատավարձից կրկնակի առավել աշխատավարձով»,- նշում է ԱՈԻԿ տնօրեն Վ. Ուռուտյանը:

Շրջանավարտների 92 %-ից ավելին աշխատանք են գտել համալսարանն ավարտելուց հետո՝ մինչև մեկ տարվա ընթացքում: Նրանց 20 %-ը վարում է ղեկավար պաշտոն հայաստանյան առաջատար բիզնես ոլորտի կազմակերպություններում, ՀԿ-երում և կրթական հաստատություններում: Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի 2008 թ. շրջանավարտ Լուսինե Թադևոսյանը փաստեց, որ ATC-ն իրեն հնարավորություն է տվել ստանալ արևմտյան կրթական չափանիշներին համապատասխան կրթություն երկրի ներսում: «Այն, ինչ տարածաշրջանային բազմաթիվ դասախոսների համար տեսլական է, - ասում է Լուսինեն,- մեր դասախոսների համար պարզապես առաքելություն է: Նրանք ոչ թե խոսում են գիտելիքահենք հասարակություն ստեղծելու պլանների մասին, այլ պարզապես ստեղծում են այդ հասարակությունը Հայաստանում և Վրաստանում»: ICARE հիմնադրամի մեկ այլ հաջողության պատմություն վերաբերում է Ի-Վի-Էն գինու ակադեմիայի հիմնադրմանը (Սեմինա Քոնսալթինգ կազմակերպության հետ համատեղ), որն իր կարճատև գործունեության ընթացքում նույնպես առաջատար դեր ստանձնեց գինեգործության ոլորտում, մասնավորապես՝ գործող գինեգործների վերապատրաստման, ոլորտում տարածաշրջանային և միջազգային

համագործակցության և, իհարկե, գինու լաբորատորիայի ստեղծման ծրագրերի իրականացմամբ:

www.anau.am

ԱՍՈՒԼԻՍ

ՓՈԽՆԱԽԱՐԱՐՆ ԱՄՓՈՓԵՑ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Սամվել Գալստյանն ասուլիսի ընթացքում ներկայացրել է 2015 թվականի գյուղատնտեսական տարվա բուսաբուծության ոլորտի արդյունքները:

Ամփոփելով կատարված աշխատանքները՝ նախարարի տեղակալը մասնավորապես նշել է, որ պետության կողմից հատկապես վերջին տարիներին շարունակաբար իրականացվող պետական աջակցության մի շարք ծրագրերը նպաստավոր պայմաններ են ստեղծել հանրապետությունում հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների և համախառն բերքի արտադրության ծավալների ավելացման, հողօգտագործողների եկամուտների բարձրացման և տնտեսական աճի ապահովման համար:

Ըստ ներկայացված տվյալների՝ 2010-2015 թթ ցանքատարածությունները, ընդհանուր առմամբ, ավելացել են շուրջ 68 հազար հեկտարով: Նախորդ տարվա 14.7 հազար հեկտարի փոխարեն ցանքերն այս տարի ավելացել են 18.7 հազ. հեկտարով: Ընթացիկ տարում հացահատիկի ցանքատարածություններն ավելացել են շուրջ 11.3 հազ. հեկտարով, բանջարեղենինը՝ 2.5 հազ. հեկտարով, այդ թվում, լոլիկինը՝ շուրջ 1000 հա-ով, կարտոֆիլինը՝ 960 հա-ով և բոստանային մշակաբույսերինը՝ 950 հա-ով:

Հացահատիկի և հատիկաընդեղենի համախառն բերքի արտադրությունը 2010թ. 326.4 հազ. տոննայից ավելացել է 304 հազ. տոննայով՝ 2015թ. կազմելով 630 հազ. տոննա, այդ թվում՝ ցորենի արտադրությունը 184 հազ. տոննայից հասել է 369 հազար տոննայի, ինչի արդյունքում ինքնաբավության մակարդակն այժմ հանրապետությունում կազմում է շուրջ 50 %:

«Կատարված աշխատանքները, իրականացված ծրագրերը և բնակլիմայական պայմանները նպաստեցին, որպեսզի այս տարվա գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները բոլոր ուղղություններով ըստ օպերատիվ տվյալների, գերազանցեն նախորդ տարվա ցուցանիշները», - նշել է Սամվել Գալստյանը:

Հայաստանի Հանրապետությունում, օպերատիվ տվյալներով, 2015 թվականին արտադրվել է 369.4 հազար տոննա ցորեն՝ նախորդ տարվա 338.1 տոննայի դիմաց, 377.8 հազար տոննա պտուղ՝ նախորդ տարվա 291.0 հազար տոննայի դիմաց, որից՝ 105.9 հազար տոննա ծիրան, նախորդ տարվա 15.5 հազար տոննայի դիմաց: Ծիրանի բարձր բերք է ստացվել հատկապես Արմավիրի, Արարատի, Արագածոտնի մարզերի այգիներից: 2015 թվականին արտադրվել է նաև 309.2 հազար տոննա խաղող՝ նախորդ տարվա 261.3 հազար տոննայի դիմաց, 1033.7 հազար տոննա բանջարեղեն՝ նախորդ տարվա 923.2 հազար տոննայի դիմաց, 776.6 հազ. տոննա կարտոֆիլ՝ նախորդ տարվա 733.1 հազար տոննայի դիմաց և 285.9 հազ. տոննա բոստանային մշակաբույսեր՝ նախորդ տարվա 245.7 հազար տոննայի դիմաց:

Փոխնախարարը շեշտել է, որ մարզերից ստացված սուբսիդավորված արժեքներով պարարտանյութերի (ազոտական, ֆոսֆորական, կալիումական), դիզելային վառելանյութի, 2015թ. գարնանացանի և աշնանացանի համար անհրաժեշտ սերմացուների վճարունակ պահանջարկներն ամբողջությամբ բավարարվել են, և ծրագրերը շարունակվելու են նաև 2016 թվականին:

Սամվել Գալստյանը հորդորել է հողօգտագործողներին՝ 2016 թվականին հողերի համալիր պարարտացման աշխատանքներ իրականացնել, բացի ազոտական պարարտանյութերից, օգտագործել նաև ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր, ինչը կկանխի հողերի միակողմանի պարարտացումը:

Փոխնախարարի տեղեկացմամբ, ՀՀ կառավարության որոշմամբ, Շիրակի և Լոռու մարզերում 2014 և 2015 թվականներին կարկտահարությունից տուժած մի շարք համայնքների՝ Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրի շրջանակներում, 2013 և 2014 թվականներին հատկացված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի դիմաց ձևավորված պարտքերը ներվել են:

Այս տարվա աշնանացանի համար հողօգտագործողներին հատկացվել է 4257.62 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու: 2015 թվականին 2016 թվականի բերքի համար կատարվել է 116830 հա աշնանացան, նախորդ տարվա՝ 111836 հա-ից 5000 հա ավելի: Ս. Գալստյանը հավելել է, որ այժմ բնակլիմայական պայմանները նպաստավոր են և շարունակական լինելու դեպքում, 2016 թվականին ակնկալվում է ստանալ կայուն երաշխավորված բերք:

Նա նաև հայտնել է, որ բարձր վերարտադրության սերմացուների արտադրություն կազմակերպելու նպատակով, Ռուսաստանի Դաշնությունից գնվել է 40 տոննա աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմացու և հատկացվել 14 սերմարտադրողների և կազմակերպությունների: Իրականացված ծրագրերի արդյունքում ցորենի օգտագործվող սերմացուի 75-80%-ը սորտաթարմացվել է:

Սամվել Գալստյանի խոսքով՝ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նորագույն տեխնոլոգիաներով զինված ջերմատնային տնտեսությունների զարգացմանը: ՀՀ մարզպետարաններից հավաքագրված օպերատիվ տվյալների համաձայն, 2015 թվականի դեկտեմբերի 18-ի դրությամբ, ջերմատների ընդհանուր տարածքը հանրապետությունում կազմում է 769.6 հա, որից նորագույն տեխնոլոգիաներով՝ 83.7 հա, որոնց մեծ մասը շահագործման են հանձնվել 2015 թվականի ընթացքում: Ս. Գալստյանի խոսքով՝ 2016 թվականին նախատեսվում է կառուցել ժամանակակից տեխնոլոգիաներով շուրջ 45.0 հեկտար ջերմատներ:

Փոխնախարարն ընդգծել է, որ ջերմատնային տնտեսության զարգացման արդյունքում՝ ընթացիկ տարվա գարնանից հանրապետության շուկաներում իրացվել է հիմնականում բարձրորակ տեղական արտադրության լոլիկ և վարունգ, զգալիորեն ավելացել են բանջարեղենի արտահանման ծավալները:

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅ ԿԻՆ ՊԵՏՔ Է ԲԱՐԻՔ ՍՏԵՂԾԻ

Արագածոտնի մարզի Ձորափ գյուղի բնակչուհի Ալլա Ղազարյանի վաղեմի երազանքն իրականություն է դարձել: Նրա նախաձեռնությամբ հիմնված «Սուխաֆրուկտի Ալլա» ընկերությունը ընտանեկան գործարարության լավագույն օրինակ է հանդիսանում տարածաշրջանում: Սեփական այգիներում աճեցված մրգատեսակներից պատրաստում են արևահամ բազմատեսակ չրեր և ազգային ավանդական քաղցրավենիքներ, որոնք արդեն ճանաչում ունեն սպառողների շրջանում:

Աշխատանքներում ընդգրկված են ընտանիքի անդամներ, դուստրը՝ Քրիստինե Ղազարյանը, հարսը՝ Լուսինե Ղազարյանը, որդին և փեսան, ինչպես նաև գերդաստանի այլ անդամներ: Անհրաժեշտության դեպքում թարմ մրգեր գնում են նաև հարևան ֆերմերային տնտեսություններից: «Որոշել ենք ընդլայնել արտադրությունը, նոր աշխատատեղեր ստեղծել, որպեսզի մեր գյուղից ոչ ոք չմեկնի արտագնա աշխատանքի: Դրա փոխարեն մնան գյուղում, զարգացնեն այգեգործությունը, բարիք ստեղծեն: Այդպիսով կկարողանան հոգալ ընտանիքի կարիքները»,- ասում է տիկին Ալլան: Ելնելով սպառողի պահանջարկից՝ արտադրում են թե՛ բնապահպանորեն մաքուր և, թե՛ շաքարաջրով մշակված չրեր: Նախապատվությունը, իհարկե, տալիս են օրգանիկ եղանակով արտադրված չրերին:

Փաթեթավորման և ձևավորման աշխատանքները կատարում են Լուսինեն և Քրիստինեն՝ հանդես գալով նորարարական և յուրօրինակ մոտեցումներով: Իհարկե, հետևում են նաև տիկին Ալլայի խորհուրդներին, ով արդեն աշխատանքային փորձ ու հմտություն է ձեռք բերել:

Ի դեպ, այս տարի ՀՀ գյուղատնտեսության նախարարության ԳԾԻԳ-ի կողմից ընկերությանը հատկացվել է չրի ժամանակակից սարքավորում, որի շնորհիվ թե՛ արագացել են արտադրական գործընթացները, և թե՛ բարելավվել է արտադրանքի ապրանքային տեսքը: Միաժամանակ ավելացրել են երեք նոր աշխատատեղեր:

Հարցին, թե արդյո՞ք հեշտ է համատեղել գործարարությունն ընտանեկան հոգսերի հետ, տիկին Ալլան պատասխանում է դժվարություններից չի վախենում: «Դժվար է, բայց փորձում եմ համատեղել երկուսը միասին, վարվել այնպես, որ ոչ ոք չտուժի: Այդպիսով, կուզենայի օրինակ ծառայել հայ կանանց, որպեսզի նրանք իրենց աշխատանքով բարիք ստեղծելով, օգնեն իրենց ընտանիքին, թեթևացնեն ամուսնու հոգսերը»,- նշում է տիկին Ալլան:

Ինչ վերաբերում է ազատ ժամանակին, ապա գործարար կնոջ կյանքում այդպիսի պահեր գրեթե չեն լինում, նա միշտ աշխատանքի մեջ է, տանը, թե արտադրամասում: Կին գործարարը հանդես է գալիս նաև նորություններով, մշտապես փոփոխելով ու հարստացնելով արտադրատեսականին: Նրա համար կարևորը ՝նույնիսկ ամենախստապահանջ սպառողի պահանջարկը բավարարելն է:

Ընթացիկ տարվա մեծագույն հաջողությունը Ալլա Ղազարյանի համար ՀՀ գյուղատնտեսական նախարարության կողմից «Կին հերոս» կոչման շնորհումն էր, որն էլ ավելի է ոգևորել առաքինի տիկնոջը: Տիկին Ալլան նոր ծրագրեր ունի գալիք տարում, նախատեսել են ստեղծել ապակեծածկ ջերմոցային չորանոցներ, որոնց արտադրողականությունն ավելի բարձր է: Ունեն նաև սառնարանների կարիք: Դժվարություններ, ինչ խոսք, կան, սակայն քայլ առ քայլ առաջ են գնում՝ օրեցօր զարգացնելով արտադրությունը:

Նելլի Սահակյան

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՏԱԹԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2015 թվականից WWF-Հայաստանը, IDeA բարեգործական հիմնադրամի հետ համատեղ, իրականացնում է Տաթև ազգային պարկի ստեղծման ծրագիրը: Ազգային պարկի ստեղծումը չափազանց կարևոր է, քանի որ այն էականորեն կնպաստի տարածքում էկոհամակարգերի և հարուստ կենսաբազմազանության պահպանությանը, ինչպես նաև տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Ծրագրի հաջող իրականացման գրավականն է՝ համայնքների հետ համագործակցությունը: Այդ պատճառով, ծրագրի շրջանակներում, համայնքներում իրականացվում են մասնակցային պլանավորման հանդիպումներ՝ քննարկելու ազգային պարկի ստեղծման առանձնահատկություններն ու նախատեսվող գործողությունների մանրամասները, ինչպես նաև տարածքի բնակիչների դերն ազգային պարկի ստեղծման հարցում:

Վերջերս WWF-Հայաստանի աշխատակիցների կողմից իրականացվեց քննարկումների շարք՝ տարածքի 11 համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

WWF-Հայաստանի քարտեզագրող Արման Կանդարյանը ներկայացրել է Տաթև ազգային պարկի սահմաններն ու պարկի մեջ մտնող տարածքները, իսկ ծրագրի համակարգող Արթուր Ալավերդյանն առանձնացրել է՝ ազգային պարկի ստեղծման կարևորությունը, տարածքի կենսաբազմազանությունը, քննարկվել և տրվել ենեն համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հնարավոր լուծումները: Ըստ Պրն. Ալավերդյանի՝ քննարկումները նպատակ ունեն բարձրացնել համայնքաբնակների իրազեկվածության մակարդակը՝ անտառների, վայրի բնության կարևորության և այլ բնապահպանական խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել պատասխանատվության զգացում բնության պահպանության նկատմամբ, ինչի կարիքն այսօր շատ ունենք:

www.armenia.panda.org

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄԱՆՈՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐԸ ԿԳՈՐԾԵՆ ԱՄԵՆՕՐՅԱ ՌԵԺԻՄՈՎ

Երևանի գյուղատնտեսական տոնավաճառներն Ամանորի նախաշեմին՝ դեկտեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 29-ը, կգործեն ամենօրյա ռեժիմով:

Տոնավաճառները կազմակերպվում են Կասյան փողոցի վերին հատվածում և Մաշտոցի պուրակին հարող տարածքում (Մալիբու սրճարանի հարևանությամբ): Տոնավաճառներին մասնակցում են հանրապետության տարբեր մարզերի գյուղացիական տնտեսությունները, որոնք սպառողներին ներկայացնում են բացառապես սեփական արտադրանքը:

Տոնավաճառի մասնակիցներին, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն անվճար հիմունքներով, տրամադրում է հարմարավետ վրաններ, վաճառասեղաններ, կշեռքներ ու սայլակներ: Երևանի քաղաքապետարանն աջակցում է տարածքի տրամադրման և մաքրման աշխատանքների իրականացման հարցում:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Էդուարդ Մեսրոպյանը 1972 թ. ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը, աշխատանքի է անցել «Երևան» ջրմուղ-կոյուղի ընկերությունում, այնուհետև 15 տարի աշխատել Մոսկվայում, զբաղվել քաղաքի ջրամատակարարման խնդիրների լուծմամբ, համահեղինակ է այդ քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի զարգացման գործում, որը մշակվել էր կառավարության որոշմամբ և արժանացել բարձր գնահատականի: Ավարտելով Մոսկվայում ասպիրանտուրան՝ պաշտպանել է գիտական թեզը, տնտեսական գիտությունների թեկնածու է: 1990 թ. վերադառնալով Հայաստան՝ հիմնադրել է «ՋԻՆՋ» ՍՊԸ-ն:

Ջրային բնագավառում բազում որակյալ և նախագծային լուծումներ իրականացնելու համար, «ՋԻՆՋ» ընկերությունը, այս տարիների ընթացքում պարգևատրվել է բազմաթիվ միջազգային մրցանակներով: Ընկերության կողմից կատարված աշխատանքներին ծանոթացրեց «ՋԻՆՋ» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրենը:

- Պարոն Մեսրոպյան, Ձեր աշխատակիցների հետ միասին, ի՞նչ աշխատանքներ եք իրականացնում Հայաստանում:

- Մասնավորապես մենք ուսումնասիրում և գնահատում ենք Հայաստանի տարբեր բնակավայրերի գոյություն ունեցող ջրային համակարգերը, դրանց դրանց օգտագործման և վերականգնման հետ կապված խնդիրները: Այնուհետև հավաքելով բոլոր անհրաժեշտ տվյալները՝ մեր թիմը մշակում է նախագծային լուծումներ՝ արդիական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Վերջին տարիներին ակտիվացրել ենք մեր գործունեությունը Հայաստանի բնակավայրերի կեղտաջրերի հեռացման և մաքրման գործընթացի ուղղությամբ: Ուսումնասիրելով միջազգային և գիտական փորձը՝ մշակել ենք այլընտրանքային տեխնոլոգիա:

«ՋԻՆՋ»-ի տանիքի տակ հավաքվել են բավականին փորձառու մասնագետներ, նախագծման, շինարարության, փորձաքննության ուսումնասիրման, գիտական աշխատանքների մեծ փորձ ունեցող մարդիկ, որի արդյունքում շուրջ 25 տարի կարողանում ենք պահել առաջատար դիրք երկրում, նաև իրականացնել որոշ նորարարական աշխատանքներ: Ունենք բնապահպանական մասնագետների կայացած թիմ, որոնց օգնությամբ կարողանում ենք ցանկացած նախագգծային աշխատանքներում համադրել տեխնիկական աշխատանքները և շրջակա միջավայրի ազդեցությունը: Կարող եմ նշել հետևյալը՝ ՀՀ-ում կիրառել ենք ենթահունային ջրընդունիչներ, որն առաջին անգամ կիրառել ենք Վանաձոր քաղաքում, իսկ երկրորդ ամենամեծ ծրագիրը՝ Արթիկ քաղաքի ջրամատակարարման համակարգի նախագծման ժամանակ: Երրորդը՝ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղի համար կառուցեցինք, որն արհեստական սնուցմամբ ենթահունային ջրընդունիչ էր, այնուհետև այդ նույն տեխնոլոգիան կիրառվեց Սևան քաղաքի որոշ թաղամասերում:

- «ՋԻՆՋ» ընկերությունը բնական եղանակով մաքրման կայաններ է կառուցել Փարաքար գյուղում, կներկայացնե՞ք համառոտ:

- Երբ որ ջրամատակարարման վիճակն ինչ-որ չափով բարելավվեց, կառավարությունն աստիճանաբար սկսեց ուշադրությունն ուղղել ջրահեռացման խնդիրներին: Արդեն 5 տարուց ավելի է այդ հարցն ուշադրության կենտրոնում է, որոշակի աշխատանքներ են տարվում՝ ջրահեռացման համակարգերի, մաքրման կայանների նախագծման ուղղությամբ: Փորձել ենք գտնել ամենամատչելի տարբերակները:Ազգային ջրային համագործակցություն ՀԿ-ի հետ համատեղ, բնական եղանակով մաքրման կայաններ ենք կառուցել Փարաքար գյուղում: Այդտեղ կոյուղու համակարգն ամբողջությամբ խափանված էր՝ առաջացնելով հակասանիտարական վիճակ: 2010թ. սկսեցինք նախագծման աշխատանքները, 2012թ. առաջին փուլը հանձնվեց: Այս տարի ևս որոշ մաքրման աշխատանքներ ենք կատարել, և արդյունքում գյուղն ունի կեղտաջրերի մաքրման կայան: Մինչ մաքրման կայանի կառուցումը, շուրջ 100 հա գյուղատնտեսական նշանակության հողեր չէր մշակվում, կառուցումից հետո 60 հա-ը վերականգնվել է:

- Այլ երկրների նմանատիպ կազմակերպությունների հետ, ինչպիսի՞ համագործակցություն կա:

-«ՋԻՆՋ» ընկերությունը գլոբալ համագործակցային ցանցի անդամ է: Կապեր ունենք Եվրոպական շատ երկրների՝ Ֆրանսիայի, Չեխիայի, Գերմանիայի, Հունաստանի, Իտալիայի, Նորվեգիայի ու Շվեդիայի նմանատիպ կազմակերպությունների հետ: Հանդիպում ենք նրանց հետ 3 տարին մեկ անգամ՝ փորձի փոխանակման, նորարարությունների ու նոր մտքերի ծանոթացման և ֆորումների շրջանակներում:

- Իրականացվելիք ի՞նչ խնդիրներ և ի՞նչ ծրագրեր կան:

-Որքան շատ են հաջողությունները, այնքան շատ են առկա խնդիրները, և ամենամեծ խնդիրը, որը միայն մեր կազմակերպության հետ կապված չէ, կարող եմ վստահ ասել, որ երկրի մակարդակով է: Դա մասնագիտական մակարդակի ցածր լինելն է: Այսօր, ցավոք սրտի կորցրել ենք շատ մասնագետներ, ովքեր հեռացել են, իսկ մյուսներն էլ կարծես առաջ չեն շարժվում: Ամենամեծ խնդիրը՝ կադրերն են, բարելավման պահպանման գործում կարևոր նշանակություն ունի ճիշտ առաջադրանքի մշակումը, որակյալ նախագիծը, շինարարությունը, հսկողությունը, շահագործումը, ինչպես նաև բնակչության մոտեցումը համակարգին: Եթե այս շղթայից որևէ մեկը խախտվում կամ կտրվում է, նվազում է աշխատանքի արդյունավետությունը: Այս առումով շատ կարևոր է մասնագետների պատրաստման հարցը:

Ինչ վերաբերում է ծրագրերի իրականացմանը, ապա ներկայումս «ՋԻՆՋ»-ը սկսել է Եվրոպական Վերակառուցման և Զարգացման բանկի ֆինանսավորմամբ, ՀՀ-ի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ներդրումային ծրագրի ուսումնասիրությունները, որը կտևի մինչև 2016թ. կեսերը: Ծրագիրը ներառում է 130 բնակավայրերի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի ուսումնասիրումը, զարգացման առաջարկությունները: Հուսամ, որ մեր ընկերությունը նույնպես իր զգալի ներդրումը կունենա երկրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի զարգացման գործում:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱԳՐՈ Լրատու
Դեկտեմբեր 15 - 26, 2015 թ.
Թիվ 33 (2088)

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ ԼԱՅՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԵՂԾՈՒՄ ՀԱՅ ԱՐՏԱԴՐՈՂԻ ՀԱՄԱՐ

«Նոր Գեղիի գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվը ձևավորվել է 2011թ.-ին՝ 10 անդամներով: Կոոպերատիվը զբաղվում է այգեգործությամբ, տնկիների և հացահատիկային մշակաբույսերի արտադրությամբ, ինչպես նաև՝ անասնաբուծությամբ: Կոոպերատիվի տարբեր սորտերի խնձորներն այսօր արտահանվում են ՌԴ:

Այգետարածքները, որոնք 39,3 հա են, վերջերս, ստացած վարկի շնորհիվ, ընդարձակվել են: Աճեցնում են հիմնականում երեք սորտի՝ Այդորետ, Կրիպսոն և Գոլդեն սորտի խնձորներ: Կոոպերատիվի նախագահ Ավետիք Թևոսյանի տեղեկացմամբ, ելնելով ռուսական և ներքին շուկայի պահանջարկից՝ նախատեսել են տնկել նաև Սիմիրենկո և Մուղսի սորտերի տնկիներ: Կոոպերատիվի անդամները ոչ միայն համատեղ են տնօրինում այգետարածքները, այլև ստեղծել են 3000 տոննա տարողությամբ սառնարանային տնտեսություն, որտեղ պահեստավորված բերքը, «Սպայկա» ընկերության միջոցով, արտահանում են: Ի դեպ, բարձրորակ խնձորի զգալի քանակություն գնում են Վրաստանի Հանրապետությունից ժամանած մշտական գործընկերները: Նոր Գեղիի խնձորի պահանջարկը մեծ է նաև ներքին, հիմնականում՝ Երևանի շուկայում: Կոոպերատիվի անդամների կողմից տարեկան արտադրվում է 500 տոննա խնձոր, որը համային հատկանիշների շնորհիվ, ամբողջությամբ սպառվում է: Հաջողությամբ համատեղ իրականացնում են նաև տնկիների արտադրությունը. տարեկան արտադրվում է շուրջ 30 հազար բարձրորակ տնկի: Նախագահը նշեց նաև, որ նախատեսում են կազմակերպել չրերի և հյութերի արտադրություն:

Կոոպերատիվի կողմից մշակվում են նաև 143,6 հա հողատարածքներ, որոնք դրվում են ցորենի, գարու և կորնգանի ցանքի տակ: Ի դեպ, արտադրված գարու և կորնգանի ամբողջ քանակությունը, որպես անասնակեր, տրվում է կոոպերատիվի ֆերմերային տնտեսությունում բուծվող կենդանիներին: Խնամում են 100 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, որոնցից 50-ը՝ կովեր են: «Կոոպերատիվի անդամները միավորեցին իրենց գյուղացիական փոքր տնտեսություններում գտնվող գյուղատնտեսական կենդանիներին, որոնք հիմա պահվում են համատեղ: Կաթը հավաքվում և հանձնվում է վերամշակող ընկերություններին, իսկ եկամուտը՝ բաշխվում կոոպերատիվի անդամներին: Անասնագոմում աշխատանքները

հիմնականում մեքենայացված են»,- պատմում է կոոպերատիվի անդամ Անդրանիկ Ենգիբարյանը:

Նրա կարծիքով, գործընթացը կազմակերպված բնույթ է կրում, և մինչև այսօր խնդիրներ չեն ունեցել: Կոոպերատիվի անդամները գոհ են աշխատանքի կազմակերպման այս եղանակից:

Ինչ վերաբերում է հողի մշակության աշխատանքներին, ապա կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ ներդնում է իր մասնագիտական կարողություններն ու աշխատանքը: Այդպիսով՝ ծառայությունների դիմաց վճարումներ չեն կատարում: Արդյունքում՝ իջնում է արտադրվող բերքի ինքնարժեքը, դյուրին է դառնում՝ իրացման գործընթացը: Իսկ թունաքիմիկատների, պարարտանյութերի և դիզելային վառելանյութի համատեղ մեծ խմբաքանակով ձեռք բերման արդյունքում, տնտեսվում են ֆինանսական միջոցները:

Կոոպերատիվն ունի նաև հարուստ մեքենատրակտորային հավաքակայան, թեև այն նորացման կարիք ունի: Ինչ վերաբերում է ռուսական շուկային, ապա կոոպերատիվի նախագահի կարծիքով՝ այն լայն հնարավորություն է ստեղծում հայաստանյան արտադրողների համար, մնում է ընդլայնել արտադրությունն ու ապահովել անհրաժեշտ պահանջարկը:

Նելլի Սահակյան

ԽՄԱՆԿԱՐ

ՄԱԿ-Ը 2016-Ը ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է ԼՈԲԱՀԱՏԻԿԱՎՈՐՆԵՐԻ ՏԱՐԻ

Այդպես են կոչվում այն լոբազգիները, որոնց պտուղները հավաքվում և օգտագործվում են չոր հատիկների ձևով, որոնք իրենց պատիճներում պարունակում են 1-ից մինչև 12 տարբեր գույնի, ձևի և չափի հատիկներ և օգտագործվում մարդկանց, ինչու չէ, նաև մարդկանց և կենդանիների սննդակարգում:

Դրանցից ամենատարածվածներն են՝ հատիկ լոբին, ոլոռը, ոսպն ու սիսեռը: Այս դասին չեն վերաբերվում կանաչ լոբին և կանաչ ոլոռը. դրանք պատկանում են բանջարեղենի խմբին: Լոբահատիկավորներ չեն համարվում նաև սոյան, գետնանուշը (որոնցից նաև բուսայուղ են քամում), և լոբազգիների այն ներկայացուցիչները, որոնք կարևորվում են որպես սերմացու՝ մասնավորապես երեքնուկը և առվույտը:

Պակաս հայտնի լոբահատիկավորներն են լիմայի լոբին, կարոլինական, լիմայի և կանաչ լոբահատիկները: Թուրքական ոլոռ կոչվող սիսեռը՝ կովասիսեռի հետ միասին, ինչպես նաև՝ չինական վիգնան և աղավնաոլոռը, նույնպես լոբահատիկավորներ են, ինչպես ոսպի բազմապիսի տարատեսակները՝ կարմիրը, չինան և այլն:

Լոբահատիկավորները մաս են կազմում աշխարհի ժողովուրդների գլխավոր կերակրատեսակների, այսինքն՝ համաշխարհային խոհանոցի անբաժանելի տարրն են՝ սկսած միջերկրածովյան հոմուսից, որ սիսեռից են պատրաստում, մինչև անգլիական «լրիվ» նախաճաշի տարր հանդիսացող լոբին և հնդկական դալը, որը պատրաստում են ոլոռից կամ ոսպից:

Լոբահատիկավորները կարևոր գյուղատնտեսական մշակաբույսեր են մի շարք պատճառներով. դրանք հարուստ են սննդատարրերով և հատկապես աչքի են ընկնում սպիտակուցի բարձր պարունակությամբ, ինչը դրանց հատկապես արժեքավոր է դարձնում այն տարածաշրջաններում, որտեղ միսն ու կաթնամթերքը, տնտեսական առումով, անհասանելի են:

Անգամ եթե կենդանական ծագման սպիտակուցն առկա է, այն կարող է հասանելի չլինել պակաս եկամուտ ունեցող բնակչության համար: Կաթի սպիտակուցն, օրինակ, 5 անգամ ավելի թանկ է, քան՝ լոբահատիկայիններից ստացված սպիտակուցը, որն իր արժեքավորությամբ ոչնչով չի զիջում առաջինին: Բացի սպիտակուցի բարձր պարունակությունից, նրանք արժեքավոր են ճարպերի պակաս և լուծելի բջջանյութի բարձր պարունակության առումով, ուստի և դրանց կանոնավոր օգտագործումը նպաստում է խոլեստերինի մակարդակի նվազեցմանը, նաև կարգավորում օրգանիզմում շաքարի մակարդակը: Նաև դրա շնորհիվ է, որ լոբահատիկայիններն առողջապահական կառույցների կողմից երաշխավորվում են որպես վարակիչ հիվանդությունների, ինչպես նաև շաքարախտի և սրտանոթային հիվանդությունների բուժման միջոց: Որոշիչ դեր են խաղում դրանք նաև ճարպակալման դեմ տարվող պայքարում:

Գյուղացու համար լոբահատիկավորներն արժեքավոր մշակաբույս են այն պատճառով, որ հավասարապես պիտանի են թե իրացման, թե սեփական օգտագործման համար՝ ապահովելով երկրում տնտեսական կայունություն և պարենային անվտանգություն: Իսկ այդ մշակաբույսերի ազոտ ֆիքսող ունակությունն անընդհատ բարելավում է հողերի բերրիությունը և բարձրացնում երկրագործության արդյունավետությունը, նպաստում կենսաբազմազանությանը, վնասատուների և հիվանդությունների դեմ տարվող պայքարին:

Այս ամենի հետ մեկտեղ, լոբահատիկավորները մեղմում են կլիմայի փոփոխման հետ կապված հետևանքները, քանի որ վերացնում են սինթեզվող պարարտանյութերից դեռ շարունակվող արատավոր կախվածությունը, որոնք արհեստական կերպով հագեցնում են հողը ազոտով: Դրանք թունավորում են շրջակա միջավայրը, այն դեպքում, երբ լոբահատիկավորները բնական կերպով օդի ազոտը կապում են և հասանելի դարձնում բույսերի սնուցման համար՝ միաժամանակ հեշտացնելով նաև հողում պարունակվող ֆոսֆորի յուրացմանը:

Երկրագործը միշտ պետք է հիշի, որ լոբահատիկավորների բերքատվությունը միշտ 2-3 անգամ ավելին է, քան հացահատիկինը, իսկ սպիտակուցի պարունակությամբ կրկնակի է հացահատիկի, և եռակի՝ բրնձի համեմատ: Դրանք նաև աչքի են ընկնում երկաթի ու ցինկի բարձր պարունակությամբ, ինչն անգնահատելի է դարձնում դրանց հատկապես երեխաների և կանանց սննդակարգում, որոնք առավել հաճախ են տառապում անեմիայով:

Այս արժեքավոր մշակաբույսերը չափազանց կարևոր են ոչ միայն մարդու, այլև կենդանիների, հողերի և ընդհանրապես բնության համար: Գյուղատնտեսական կենդանիները, սնվելով լոբահատիկավորների բուսական մնացորդներով, լրացնում են սպիտակուցի անհրաժեշտ քանակն իրենց սննդաբաժնում: Արհեստական պարարտանյութերի փոխարեն օդից ստանալով բնականորեն ֆիքսված ազոտ՝ բույսերը նպաստում են նաև հողում տիրող կենսաբազմազանությանը, որով բարենպաստ կենսամիջավայր է ստեղծվում հողաբնակ մանրէների և հողի բերրիությունը պահպանող այլ օրգանիզմների համար:

2016 թվականը լոբահատիկավորների տարի հռչակելու ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 8-րդ նիստում հանդիսավոր արարողությունները մեկնարկեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունի ուղերձի ընթերցմամբ և ավարտվեցին ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության գլխավոր տնօրեն **Ժոզե Գրացիանո դա Սիլվայի** խոսքով: Ըստ նրա՝ տարին պետք է ծառայեցնել այդ կարևոր մշակաբույսերի վերաբերյալ մարդկանց տեղեկացվածության բարձրացմանը, արտադրության և ապրանքափոխանակության զարգացմանը, սննդաշղթայում, նոր, ավելի ռացիոնալ եղանակների կիրառման միջոցով, դրանց ավելի լայն ընդգրկման համար:

Վ Հ

Ուսուցողական դասընթաց

ՀԵՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՐՄԱՎԻՐԻ ԳԱՄԿ-ՈՒՄ

Օրերս Արմավիրի ԳԱՄԿ-ում տեղի ունեցավ ուսուցողական դասընթաց «Ֆիլոքսերան, տարածման պատմությունն ու ներկայիս վիճակը Հայաստանում», «Ինտեգրացված պայքար՝ լոլիկի հիվանդությունների և վնասատուների դեմ» թեմաներով, որին մասնակցում էին ԳԱՄԿ-ի և մարզպետարանի գյուղատնտեսության վարչության բաժի աշխատակիցները և շահագրգիռ ֆերմերներ: Սեմինարը կազմակերպել էր գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնը: Ներկաներին ողջունեց ԳԱՀԿ-ի փոխտնօրեն Արշալույս Հայրապետյանը:

Ուսուցման թեմաները ներկայացրեց ՀԱԱՀ Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի վարիչ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Արմենակ Տեր-Գրիգորյանը: Նա

նշեց, որ ֆիլոքսերիան երկրագործության պատմության մեջ ամենավնասաբեր աղետներից մեկն է և այն վերացնելու համար դեռ որևէ միջոց չի հայտնաբերվել: Հայաստանում ֆիլոքսերան առաջին անգամ նկատվել է դեռևս 1926 թվականին նախկին Նոյեմբերյանի շրջանում. մինչև վերջերս այն տարածված էր միայն հանրապետության հյուսիս-արևելյան գոտում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: 2009թ. ֆիլոքսերան հայտնաբերվեց նաև Արմավիրի մարզի Գայ համայնքում՝ մոտ 3,08 հա տարածքի վրա: 2014 թվականին մոնիտորինգի արդյունքներում մարզի 22 համայնքում հայտնաբերվել է ֆիլոքսերիա: Այս արդյունքները ցույց են տալիս, որ դինամիկան զարգացում է ապրում, որը մեծ վտանգ է ներկայացնում խաղողագործության հետագա զարգացման համար: Այդ պատճառով այ-

սօր կարևոր է օգտագործել ֆիլոքսերայի դեմ պայքարի բոլոր հնարավոր ձևերը:

Բանախոսը ներկայացրեց նաև վնասատուի զարգացման փուլը, տարածման ճանապարհները, ինչպես նաև պայքարի միջոցառումները, որոնք հնարավորություն կտան ազդել վնասատուի դինամիկայի հետագա հետագա զարգացման վրա: «Ինտեգրացված պայքար լոլիկի հիվանդությունների և վնասատուների դեմ» թեման ներկայացնելու ընթացքում, խոսվեց լոլիկի հիվանդությունների և դրանց դեմ իրականացվող պայքարի մասին: Ուսուցման ընթացքում մասնակիցներին ներկայացված թեմաների վերաբերյալ բաժանվեցին տեղեկատվական թերթիկներ:

Իսկ վերջում տեղի ունեցան ակտիվ քննարկումներ՝ ներկայացված թեմաների շուրջ. մասնակիցներին հուզող հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

Սահականուշ Արոյան
Արմավիրի ԳԱՄԿ

ՏՈՆԱԿԱՆ

2016 ԹՎԱԿԱՆԸ՝ ԿԱՊԻԿԻ ՏԱՐԻ

Չինաստանում հավատում են, որ Կապիկը հաջողություն ու պաշտպանություն է բերում: Երկրի հարավում ու Տիբեթում ընտանիքները հպարտությամբ էին խոսում, իրենք հենց կապիկներից են սերում: Բայց չինացիները միևնույն ժամանակ գիտեն, որ Կապիկի տարում ծնվում են նաև անհուսալի ու հակասական մարդիկ: Լինելով բոլոր նշաններից ամենաքմահաճը՝ Կապիկն, այնուամենայնիվ, միշտ մնում է բոլորի սիրելին. նա ունի հումոր, բայց խորամանկ է ու նենգ: Տպավորություն է ստեղծվում, որ Կապիկը բոլոր նշանների հետ լեզու է գտնում, բայց այս համերաշխությունը հաճախ ընդամենը մարտավարություն է: Նա շահամոլ է: Հաճոյացող, նույնիսկ ստրկամիտ: Կապիկն իր տեսակետը մյուսներից թաքցնում է անժխտելի հմտությամբ: Իրականում նա կռվում է բոլոր մյուս նշանների հետ ու իրեն բոլորից վեր է դասում: Նրա բայրացակամությունն ու վստահ շարժուձևն օգնում են երկրպագուներ ձեռք բերել: Նա միշտ ուրախությամբ օգտակար խորհուրդներ է տալիս, չնայած ինքը նախընտրում է միայն սեփական դատողություններին ապավինել:

Կապիկը խելացի է ու կիրթ, ունի հոյակապ հիշողություն, որին միայն կարելի է նախանձել: Նա ունակ է հիշել իր տեսածի, կարդացածի կամ լսածի բոլոր մանրամասները: Վերջին հաշվով՝ այդ հիշողությունը նրան պետք է, քանի որ նրա կյանքում կարգուկանոն չկա: Կապիկը տարբերվում է իր անկրկնելիությամբ, հարուստ երևակայություն ունի: Նրա համար գրեթե ոչ մի խնդիր չկա: Նա լավատես է, նրա կյանքը հարուստ է իրադարձություններով ու արկածներով: Ունենալով լավ զարգացած գոյատևման բնազդ՝ նա կարողանում է ելք գտնել նույնիսկ անելանելի թվացող իրավիճակներից: Շատ Կապիկներ տաքարյուն են ու քմահաճ, շուտ բռնկվող, միաժամանակ՝ շուտ հանդարտվող: Չնայած դրան՝ նա անգնահատելի աշխատող է, բայց քմահաճ ու ուժեղ բնավորությամբ: Գրեթե չկա մի այնպիսի գործունեության ոլորտ, որտեղ նա չկարողանար հաջողության հասնել: Սակայն նրան հեշտ է շեղելն ու համոզելը: Նա ուզում է ամեն ինչ անել նույն վայրկյանին, անմիջապես: Ամենաթեթև խոչընդոտն անգամ ունակ է փչացնել նրա տրամադրությունը ու խափանել ծրագրերը: Կապիկները լավ են զգում շրջապատի մարդկանց տրամադրությունը, կարողանում են գտնել մյուսների թույլ կողմերը ու օգտվում են դրանից՝ իրենց նպատակներին հասնելու համար:

Շատ Կապիկներ հմուտ ինտրիգաններ և արկածախնդիրներ են: Նրանք պարզապես զուրկ են խղճից ու հիշում են դրա մասին միայն այն ժամանակ, երբ իրենք են անարդարության զոհ դառնում: Կապիկը նրբանկատ չէ ու կարող է հեշտությամբ ստել, եթե դա անհրաժեշտ է գործի համար: Կարող է անազնիվ արարքներ գործել, եթե վստահ է, որ անպատիժ կմնա:

Ասում են, որ Կապիկները ինքնասիրահարված են: Նրանք պաշտում են իրենց սեփական արտացոլանքը հայելու մեջ: Բայց այս բոլոր բացասական հատկանիշներով հանդերձ, նա նաև դուր գալու ու համակրանք շահելու մեծ վարպետ է:

Գալդ բարի, Հրե Կապիկ

Նախապատրաստվենք Ամանորին

2016 թ. Հրե Կապիկը մտնում է իր իրավունքների մեջ: Դրա համար, հատկապես Ամանորի գիշերը, պետք է անել ամեն ինչ՝ նրա աջակցությանը հասնելու համար: Իսկ տոնական սեղանը՝ կազմված որոշակի մթերքներից, կօգնի դեպի տուն գրավել ուրախությունը և հաջողությունը: Մեծ շուքով Նոր տարին դիմավորելն արդեն ավանդույթ է դարձել: Մեզանից յուրաքանչյուրը սիրում է ուրախանալ և նախապես պլանավորում է, թե որտեղ և ում հետ պետք է անցկացնի տոնական գիշերը: Սակայն միայն վայրը, զգեստը և զարդերը չէ, որ կարևոր դեր են խաղում: Որպեսզի Կապիկին բարի դարձնենք, պետք է իմանանք, թե ինչ կերակուրներ են նրան հաճելի, և ինչպես պետք է ճիշտ ձևավորել հյուրասիրության սեղանը:

Ամանորյա սեղանի սփռոցը պետք է լինի գունագեղ՝ վառ և ուշադրություն գրավող անձեռոցիկներով: Սպասքը և բաժակները պետք է փայլեն մաքրությունից. պարտադիր չէ ընտրել թանկ սպասք, բավարար է, որ այն հարուստ տեսք ունենա տոնական սեղանի վրա: Կարևոր է կապիկի արձանիկի առկայությունը, և, եթե սեղանին դնեք կապիկի մոմե արձանիկ, ապա հաստատ ձեր տանն ամբողջ տարի առատություն կլինի:

Կերակրատեսակները պետք է պատրաստված լինեն բնական մթերքներից: Թող որ ամանորյա գիշերը սեղանին շատ առատ լինեն բանանն ու էկզոտիկ այլ մրգերը. այն կապիկին կերջանկացնի, որով էլ նա կկիսվի Ձեզ հետ ամբողջ տարվա ընթացքում: Հրե Կապիկը գերազանց հիշողություն ունի և բոլորի հետ վերաբերվում է այնպես, ինչպես նրանք վերաբերվել են իր հետ: Դրա համար ամեն ինչ կախված է միայն ձեզանից: Քանի որ Կապիկը միշտ գտնվում է շարժման մեջ և վարում է շատ ակտիվ կյանք, ապա սեղանին պետք է շատ բանջարեղեն լինի: Բանջարեղենից պատրաստված յուրաքանչյուր կերակրատեսակ, յուրաքանչյուր աղցան հիացմունքով և շնորհակալությամբ կընդունվի Կապիկի կողմից:

Մսից պատրաստված կերակրատեսակներ կարելի է քիչ ունենալ սեղանին, քանի որ Կապիկն այն չի ուտում: Բայց եթե չեք կարող ձեզ զրկել նման հաճույքից, ապա աշխատեք մսային կերակրատեսակները պատրաստել ջեռոցում: Այդպիսով՝ կակտիվացնեք Կրակի տարերքը, որը, ամբողջ տարվա ընթացքում, դրական ազդեցություն կունենա ձեր կյանքի վրա: Եվ վերջապես, ինչ սեղան՝ առանց քաղցրեղենի և ալկոհոլային խմիչքների. կարևոր չէ հյուրասիրության քանակը, կարևոր է որակը: Արդյունքում՝ տուն կգրավեք հարստությունը և կգոհացնեք քաղցրակեր Կապիկին:

Պետք չէ հուսահատվել, եթե Ձեզ մոտ չստացվի կիրառել վերոնշյալ բոլոր հանձնարարականները: Գալիք Հրե Կապիկի տարում կարևոր է տրամադրվել լավատեսությամբ ու լավ տրամադրություն: Հենց ուրախությունը և յուրաքանչյուր իրավիճակում լավը տեսնելու ընդունակությունը դեպի ձեզ կգրավի հաջողությունը:

Շնորհավոր Ամանոր

ԱԳՐՈ Լրատու
Դեկտեմբեր 15 - 26, 2015 թ.
Թիվ 33 (2088)

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՏՈՆԱՎԱՃԱՌ

Դեկտեմբերի 12-ին «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» (ՀԵԿԱ) հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ, Երևանի քաղաքապետարանում կայացավ բարեգործական տոնավաճառ՝ նվիրված Ամանորին և Սուրբ Ծննդին: ՀԵԿԱ-ն բարեգործական տոնավաճառներ կազմակերպում է 2010 թ.-ից, յուրաքանչյուր տարի 2-3 տոնավաճառ՝ նվիրված Կանանց, ՀՀ Անկախության տոներին, Նոր Տարվան և Սուրբ Ծննդին:

Տոնավաճառին մասնակցում էին ՀՀ տարբեր մարզերը ներկայացնող կին արտադրողներ, ինչպես նաև միջազգային և տեղական կազմակերպություններ, Արաբական Միացյալ Էմիրությունների, Արգենտինայի, Բրազիլիայի, Լիտվայի, Շվեյցարիայի, Չինաստանի դեսպա-

նատները:

Տոնավաճառի ընթացքում, երիտասարդ կատարողների մասնակցությամբ, կազմակերպվեց մշակութային ծրագիր՝ մանկական անկյունով, ծաղրածուով և Ձմեռ պապով, ինչպես նաև անցկացվեց վիճակահանություն. խաղարկվեցին բազմաթիվ նվերներ: ՀԵԿԱ-ի ռազմավարական ուղղություններից մեկն է՝ Կանանց տնտեսական մասնակցության խթանումը, որի շրջանակներում կազմակերպվում են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ արդեն ավանդական դարձած բարեգործական տոնավաճառներ:

Հարուստ և ուշագրավ էր «Գյուղի տատիկ» ՍՊԸ տաղավարը, որտեղ ներկայացվել էին մրգային և բանջարեղենային չրեր: ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն Վերա Գրիգորյանի տեղեկացմամբ, 2016 թ. նախատեսում են կազմակերպել նաև հատապտուղների (ազնվամորի, հաղարջ և այլն) արտադրություն: Հումքի մշտական ապահովման նպատակով, ձեռք են բերել տնկիներ, հիմնել այգետարածքներ, ներդրել կաթիլային ոռոգման համակարգ: Նախատեսում են կազմակերպել նաև սառեցված մրգերի և հատապտուղների արտադրություն: Արագածոտնի մարզի Օշական գյուղում գտնվող այդ ընկերությունը սեզոնում կանանց համար ապահովում է մինչև 35 աշխատատեղ: Ցուցահանդեսի այցելուները հաճույքով էին համտեսում և գնում հայկական արևահամ մրգեղենի չրատեսակներն ու ավանդական քաղրավենիքները:

«Բարեգործական տոնավաճառներն ամեն տարի ունեն ուրույն նպատակ՝ նպաստել կանանց ու աղջիկների առջև ծառացած խնդիրների լուծմանը, կանանց շրջանում զբաղվածության մակարդակի բարձրացմանը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, աջակցել կանանց և աղջիկների առողջության պահպանմանը»,- ասում է ՀԵԿԱ-ի նախագահ Լիլիթ Ասատրյանը: Նրա տեղեկացմամբ, բարեգործական տոնավաճառից ստացված ամբողջ հասույթը կտրամադրվի Հայաստանում կանանց ձեռներեցության ծրագրերի իրականացմանը:

Նելլի Սահակյան

ԵՂԵՎՆԻՆ՝ ԱՄԱՆՈՐՅԱ ԶԱՐԴ

Եղևնին (լատ.՝ Abies) մեծ ծառ է, պատկանում է սոճազգիների ընտանիքի մշտադալար, ասեղնատերև ծառերի ցեղին: Տարածված է Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում, ՌԴ-ում: Աճում է կավային, ավազակավային հողերում: Ապրում է 250–300 (հազվադեպ՝ 500) տարի: Հայտնի է ավելի քան 40 (այլ տվյալներով՝ 50) տեսակ, ՀՀ-ում աճեցվում է 4 տեսակ: Առավել տարածված են սովորական կամ եվրոպական և կեռիկավոր կամ արծաթափայլ եղևնիները: Տարբեր ժողովուրդների պատկերացումներում եղևնին խիզախության, բարձր տրամադրության, հավատարմության, երկարակեցության և անմահության խորհրդանիշ է: Բացի եղևնուն բնորոշ բոլոր այս հատկություններից, այն ունի շատ կարևոր դեր մարդկության կյանքում, որով և առանձնանում է մյուս տառատեսակներից: Այն ամենագեղեցիկ տոնի՝ Ամանորի զարդն է: Եղևնու առանձնացումը մյուս ծառերից կապված է մանուկ Քրիստոսի հետ, ով արթնանալով քնից, ուրախացել է եղևնիով, որը հրեշտակները զարդարել էին երկնքի աստղերով:

Տոնածառի ծագման պատմությունը կապվում է հայտնի կրոնական գործիչ, ռեֆորմատոր Մարտին Լյութերի հետ, ով ցուրտ դեկտեմբերյան գիշերով քարոզչությունից հետո վերադառնում էր տուն: Ճանապարհին անցնում էր ծառերի միջով, իսկ հայտնի քարոզիչը մտովի պատրաստվում էր հաջորդ քարոզին: Իր մտքերն ամփոփելիս, նա բարձրացրեց աչքերը դեպի երկինք, և ծառերի ճյուղերի միջից նրա աչքի առջև ներկայացան ադամանդյա փայլով հիանալի աստղերը: Տեսարանը հիանալի էր և շատ տպավորեց Լյութերին: Նա որոշեց այդ գիշերային գեղեցիկ տեսարանը ցույց տալ իր ընտանիքին և դրա համար տանը տեղադրեց եղևնի, որի վրա ամրացրեց վառվող մոմեր՝ աստղերի խորհրդանիշ (1513 թ.): Այսպիսով ներկայիս զարդարված տոնածառերի հայրենիքը Գերմանիան է:

Ըստ առասպելի՝ մոմերով զարդարված եղևնին շատ դուր եկավ երեխաներին, այն նաև հավանեցին հարևանները, ովքեր պատուհանից տեսան մոմերի վառվող լույսերը ծառի վրա: Շուտով Լյութերի շրջապատում այն տարածում գտավ, և ընտանիքները, մեկը մյուսին հաջորդելով, տանը տեղադրեցին եղևնիներ և զարդարեցին այն մոմերով: Մի փոքր ժամանակ անց Գերմանիայում սկսեցին տոնածառը զարդարել խնձորներով, գունավոր փոքրիկ կերպարներով, քաղցրեղենով:

Առաջին անգամ 1561թ.–ին պաշտոնապես գերմանական տարեգրության մեջ նշվում է տոնածառի մասին և նշվում է, որ տանը պետք է ունենալ մեկ զարդարված եղևնի: 17–րդ դարում տոնածառերը դեկտեմբերյան տոներին արդեն լայն տարածում ունեին ամբողջ Գերմանիայում և սկանդինավյան երկրներում: Այժմ Գերմանիայում ծննդյան տոները սկսվում են Սուրբ Ծնունդից ավելի շուտ: Դրանք կրում են «Adventszeit» անվանումը՝ լատիներենից թարգմանաբար «adventus» նշանակում է «գալուստ» և ընթանում է դեկտեմբերի 1-ից մինչև 24-ը:

Ծննդին նախորդող բոլոր կիրակիները Գերմանիայում տոնական են՝ առաջին կիրակի օրը հյուսում են եղևնու ճյուղերով պսակ և ամրացնում դռան վրա: Այն զարդարում են կարմիր և կանաչ ժապավեններով ու կոներով ամեն կիրակի պսակի վրա ամրացնում են մեկ մոմ՝ արդյունքում ստացվում է պսակ 4 մոմերով: Այժմ էլեկտրական լուսավորում է օգտագործվում՝ անվտանգության նպատակով:

Այսպիսի ծագում ունեն այսօր լայն տարածում ստացած եղևնին և դռանը ամրացված մոմերով զարդարված

պսակները: Մոմերի փոխարեն էլեկտրական լուսաշղթաների կիրառման գաղափարն անգլիացի հեռախոսավար Ռալֆ Մորիսինն է: Էլեկտրական լուսաշղթաներով առաջին տոնածառերը հայտնվեցին Ֆինլանդիայում՝ 1906 թվականին: Չարլզ Դիկենսը նկարագրել է տոնածառ՝ զարդարված տիկնիկներով, խաղալիք՝ փոքրիկ կահույքով, երաժշտական գործիքներով, հրացաններով և թրերով, մրգով և քաղցրավենիքով:

19-րդ դարի առաջին տասնամյակներում տոնածառերն ընդունված չէին: Տոնածառի առաջին ցուցադրությունը 1830-ական թվականներին կատարեցին Փենսիլվանիայի գերմանացի նորաբնակները: Իսկ Ուկրաինայում տոնածառերի վրա կար սարդ և սարդոստայն՝ որպես հաջողության խորհրդանիշ:

Այսօր արդեն տոնածառի զարդարանքներ, շողշողուն զարդաշղթաներ և առկայծող լուսաշղթաներ կարելի է գնել առևտրի ցանկացած կենտրոնում: Այն, ինչն անցյալում պարզ ընտանեկան ավանդույթ էր, այժմ վերածվել է բազմամիլիոն արտադրության՝ տարեցտարի դառնալով ավելի ու ավելի կատարելագործված: Իսկ ինչպես է այդ ավանդույթը ձևավորվել և դարձել Սբ. Ծննդյան անբաժան մասը: Քրիստոնյաների շատ ավանդույթների նման այդ ավանդույթն առաջացել է հին հռոմեական հավատալիքների և քրիստոնեության տարածման միահյուսման արդյունքում: Վաղ քրիստոնյաները հավատում էին, թե որոշ ծառեր անժամանակ ծաղկում են Սբ. Ծննդյան Տոնի նախօրեին՝ որպես Հիսուսի ծննդյան հանդեպ հարգանք և մեծարանք: Այդ հավատալիքով էր պայմանավորված տներն ամանորի առիթով բուսականությամբ զարդարելու հռոմեական ավանդույթը, ինչն էլ դարձել է տոնածառը զարդարելու արդի պատկերացման հիմքը:

Վաղ անցյալում մարդիկ զարդարում էին ծառերը՝ հավատալով, որ դրանք օժտված են բարի ուժերով, դրանցում ապրում են բարի ոգիներ: Ծառերին նվերներ կախելով՝ մարդիկ աշխատում էին գոհացնել բարի ոգիներին: Ծառերը զարդարող խնձորները խորհրդանշում էին պտղաբերություն, ընկուզեղենը՝ աստվածային նախախնամության անիմանալիություն, ձվերը՝ զարգացող կյանք, ներդաշնակություն և լիակատար բարեկեցություն: Եղևնին զարդարելու սովորույթն առաջացել է ավելի քան 2000 տարի առաջ: Մշտադալար եղևնին առանձնահատուկ տեղ է գրավել բոլոր ծառերի մեջ: Այն խորհրդանշել է կյանքը և կյանքի վերածնունդը:

Չմոռանանք նաև պատմել Սբ. Ծննդյան տոնի ծառի մասին: Եվրոպայում Սբ. Ծննդյան տոնի ծառն իր անմիջական նախորդն ունի: Դա փայտե կառույց էր՝ բուրգի տեսքով, որի վրա կախված էին բուսականություն և զարդարանքներ: Նվերները կամ քաղցրավենիքը դրվում էին բուրգի դարակներին: Մինչև տոնածառի հայտնվելը նման բուրգը Գերմանիայում և Հյուսիսային Եվրոպայում Սբ. Ծննդյան տոնի գլխավոր զարդն էր: Սբ. Ծննդյան տոնածառի մասին առաջին գրավոր հիշատակությունը թվագրվում է 16-րդ դարին: Օրինակ, 1561 թվականին թվագրված գերմանական աղբյուրում ասվում է, որ Սբ. Ծննդյան տոնին տանը չի կարող լինել մեկից ավելի տոնածառ: Ընդհանրապես, տոնածառը զարդարելու ավանդույթը կապված է դրախտի՝ խնձորներով զարդարուն ծառի հետ:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՑԱՆԿ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվող ՀԳՌԿՄ երկրորդ ծրագրի «Արժեշղթայի զարգացում» բաղադրիչի շրջանակներում 2015թ. 1-ին փուլի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ենթածրագրերի

Հերթա-կան N	Գրան-ցման N	Բիզնես-հայտերի ընդունման ամսաթիվը	Ծրագրի անվանումը	Մարզ, համայնք	Հայտատուի անուն, ազգանուն և կարգավիճակ	Ծրագրի տևողու-թյունը (ամիս)	Արժեշղթա
1	1/1	15.09.2015	«Հայկական չրերի արտահանման կարողությունների զարգացում, արտահանման ծավալների մեծացում, իրացման շուկաների հասանելիության բարձրացում»	ՀՀ Արարատի մարզ, Սուրենավան համայնք	«Արմեն Մանուկյան» Ա/Ձ	12	Միրգ բանջարեղեն
2	2/1	15.09.2015	«Չրերի արտադրության կազմակերպում, նոր տեխնոլոգիաների կիրառում»	ՀՀ Արագածոտնի մարզ, ք Ապարան	«Սուրեն-Անի» ՍՊԸ	18	Միրգ բանջարեղեն
3	3/1	15.09.2015	«Արտադրական հզորությունների ընդլայնում և տարածաշրջանի զարգացում»	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ակունք համայնք	«Արաքս-2» Արտադրական կոոպերատիվ	12	Կաթ
4	4/1	16.09.2015	«Տեխնիկական վերազինում, արտադրական կարողությունների ավելացում»	ՀՀ Սյունիքի մարզ, Ծղուկ համայնք	«Բորիսովկա» ՍՊԸ	24	Կաթ
5	12/1	16.09.2015	«Պանրի արտադրման նոր ժամանակակից սարքավորումների ձեռքբերում»	ՀՀ Շիրակի մարզ, Մուսաելյան համայնք	«Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ	18	Կաթ
6	14/1	15.09.2015	«Պահածոյացման արտադրամասի սարքավորումների վերազինում, տեխնոլոգիաների արդիականացում և սննդի անվտանգության բարելավում»	ՀՀ Տավուշի մարզ, Ջուջևան համայնք	«Արթուր և Էդիտա» ՍՊԸ	18	Միրգ բանջարեղեն
7	22/1	16.09.2015	«Ֆետա» պանրի արտադրության կազմակերպում	ՀՀ ք. Երևան	«Դուստր Մարիաննա» ՍՊԸ	10	Կաթ
8	26/1	16.09.2015	«Բիզնեսի զարգացում և մեղրի արտահանում»	ՀՀ ք. Երևան	«Մեր Սարեր Հոլդինգ» ՍՊԸ	13	Մեղր
9	27/1	15.09.2015	«Կաթնամթերքի արտադրության արտադրական բազայի նորացում, անհրաժեշտ նոր սարքավորումների ձեռքբերում»	ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք	«Կաթնամթերք Վան» ՍՊԸ	12	Կաթ
10	28/1	16.09.2015	«Թարմ սնկի արտադրություն»	ՀՀ ք. Երևան	«Առողջ սունկ» ՍՊԸ	12	Բանջարեղեն
11	30/1	17.09.2015	«Կաթի լցման գործընթացի ավտոմատացում»	ՀՀ Կոտայքի մարզ, Զովք համայնք	«Չանախ» ՍՊԸ	12	Կաթ
12	31/1	16.09.2015	«Նոր սարքավորումների ներդրմամբ «Չանախ» և «Լոռի» պանրի տեսակների արտադրության կազմակերպում ՀՀ Գեղարքունիքի մարզի, Լճաշեն համայնքում»	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Լճաշեն համայնք	«Արա-Արեգ» ՍՊԸ	12	Կաթ
13	38/1	16.09.2015	«Գյուղատնտեսական մթերքների վերամշակման ծավալների ավելացում՝ նոր սարքավորումների ներդրմամբ»	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վերին Գետաշեն համայնք	«Ատաստ ֆուդ» ՍՊԸ	12	Միրգ բանջարեղեն
14	39/1	17.09.2015	«Արտադրական հզորությունների թարմացման միջոցով բարձրարժեք պանիրների արտադրության և արտահանման կազմակերպում»	ՀՀ Արագածոտնի մարզ, Մաստարա համայնք	«ՄաստարաՉեդո» ՍՊԸ	12	Կաթ

ԿՈՏԱՅՔ

ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերջերս ՀՀ ԳՆ «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում, Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնը, կազմակերպել էր ուսուցում՝ Կոտայքի ԳԱՄԿ-ի խորհրդատուների և մարզի շահագրգիռ ֆերմերների համար:

Ներկա էին ՀՀ ԳՆ «ԳԾԻԳ» ՊՀ-ի փոխտնօրեն Ա. Վանյանը, ԳԱՀԿ-ի փոխտնօրեն, Ա. Հայրապետյանը, ուսուցանողներ «Սննդի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատում և վերլուծություն» ԳԿ-ի կենսաբանական գիտությունների թեկնածու, կ.գ.թ. Լ. Աճեմյանը և գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ռ. Սահակյանը: Ուսուցման թեմաներն էին՝ հատիկաընդեղեն մշակաբույսերի (ոսպ, ոլոռ, սիսեռ) և հնդկացորենի նոր սորտերի մշակություն և թունաքիմիկատների նպատակային և անվտանգ օգտագործումը: Ներկաներին բաժանվեցին թղթապանակներ՝ ուսուցման թեմաներին համապատասխան խորհրդատվական թերթիկներով: Լ. Աճեմյանը իր ելույթի վերջում թունաքիմիկատների օգտագործման ժամանակ անվտանգության կանոնների պահպանության անհրաժեշտության մասին փոքրիկ ֆիլմի միջոցով ավելի մատչելի և հետաքրքիր դարձրեց ուսուցման թեման: Բաժանվեցին նաև «Գիտելիք, ագրարային խորհրդատվություն և գիտելիքահենք տնտեսության կառավարում» գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում խորհրդատուների ուսուցողական դասընթացների հետադարձ կապի և գնահատման հարցաթերթիկներ, որտեղ ուսուցման մասնակիցները հնարավորություն ունեցան գնահատել թեմաների վերաբերյալ իրենց ունեցած և ձեռքբերված գիտելիքները:

Ուսուցման ավարտին տեղի ունեցավ ակտիվ քննարկում, տարաբնույթ հարցերի միջոցով ներկաները ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները և հայտնեցին իրենց գոհունակությունը:

Նշենք, որ ուսուցումը նպատակ ուներ բավարարելու գյուղատնտեսական խորհրդատուների մասնագիտական խորհրդատվության նկատմամբ ունեցած պահանջմունքները և դրանով իսկ նպաստելու նրանց հետագա գործունեությանը:

Նարինե Անդրեասյան

ՀԱՅՏԱՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ)
Դրամաշնորհային ծրագիր

Հայտամրցույթի համարը՝ No 6534-01/2015/Corr/3-L&R/2015

Ավստրիայի զարգացման գործակալությունը (ԱԶԳ) ԵՄ-ի և ԱԶԳի ֆինանսական աջակցության շրջանակներում Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը խթանելու նպատակով, դիմումներ է ընդունում ՕԳԱՆ ծրագրի հայտամրցույթի մասնակցության համար: Դիմորդների ուղեցույցին ծանոթանալու և խորհրդատվության համար կարող եք այցելել Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, սեն. 714–71, ՀՀ, Երևան, Վ. Սարգսյան 26/1 կամ հետևյալ կայքէջ՝ http://www.entwicklung.at/en/news/current-calls

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է 2016թ.-ի մարտի 21-ը, տեղական ժամանակով ժամը 16:00: Տեղեկատվական հանդիպումները և հայտամրցույթի ուղեցույցի վերաբերյալ դասընթացները տեղի կունենան հետևյալ ժամանակացույցով՝ 15 հունվարի 2016թ., ժամը 10:00, Երևանում, Էրեբունի Պլազա19:

* 19 հունվարի 2016թ., ժամը 11:00, Եղեգնաձորի մարզպետարան
* 21 հունվարի 2016թ., ժամը 11:00, Իջևանի մարզպետարան
* 26 հունվարի 2016թ., ժամը 11:00, Վանաձորի մարզպետարան
* 27 հունվարի 2016թ., ժամը 11:00, Գորիսի քաղաքապետարան

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել ***011 23 14 30*** հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ ***«Նոյան Տապան» և «Բուկինիստ»*** գրատներում:

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 139
ստորագրված է տպագրության 24.12.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա